ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 9

<<01>>փետրվարի 2021թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 8 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի ղեկավարի 2021թվականի հունվարի 22-ի թիվ 8 որոշման վերնագրի մեջ «հունվար» բառը փոխարինել դեկտեմբեր բառով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N10

<<01>> փետրվարի 2021թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով

Որոշում եմ

1. 2021 թվականի հունվարի 22-ի Գեղակերտի միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի դահլիճի փլուզման պատճառների և պատճառված վնասի չափի ուսումնասիրման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ ուսումնասիրման արդյունքում կազմել համապատասխան ակտ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավարի Ց. Հակոբյան

2021թվական փետրվարի 01
Գ. Գեղակերտ

Հավելված Հաստատված
Գեղակերտ համայնքի ղեկավարի
2021թվականի փետրվարի 01-ի թիվ 10
որոշմամբ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝	Ց. Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ա. Ահարոնյան
	Ն. Հարությունյան
	Հ. Պետրոսյան
	Գ. Մուղումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«03» փետրվարի 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N11

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի թիվ 2 որոշումը և Խաչիկ Ստյոպայի Արտաշյանի դիմումը՝

Որոշում եմ՝

1. 0046-0005 ծածկագրի տակ գտնվող 0.161հա տնամերձ հողակտորի վրա գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, Գեղակերտ համայնք Մ. Մաշտոց փող. տուն 71:
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային տարածքային ստորաբաժանման Վաղարշապատ սպասարկման գրասենյակ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման

Համայնքի ղեկավար՝

Ց. Հակոբյան

2021 թվական փետրվարի 03

գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» փետրվարի 2021թ. N12

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի թիվ 2 որոշումը և Սարգիս Հովակիմյանի դիմումը՝

Որոշում եմ՝

1. 04-087-0006-0001 ծածկագրի տակ գտնվող 0.113հա տնամերձ հողակտորին տրամադրել հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, Գեղակերտ համայնք Ղ. Աղայան փող. 2:
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային տարածքային ստորաբաժանման Վաղարշապատ սպասարկման գրասենյակ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման

Համայնքի ղեկավար՝ Ց. Հակոբյան

2021 թվական փետրվարի 08

գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

«12» փետրվարի 2021թ. N 13

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի թիվ 2 որոշումը և Վարդան Հովհաննիսյանի դիմումը՝

Որոշում եմ՝

1. Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0.3092 հա հողատարածքին տրամադրել հասցե՝ Արմավիրի մարզ, Գեղակերտ համայնք, Ե. Խաչատրյան փողոց, 11 :
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային տարածքային ստորաբաժանման Վաղարշապատ սպասարկման գրասենյակ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ց. Հակոբյան

2021թվական փետրվարի 12
Գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

<<12>> փետրվարի 2021թ. N 14

239.0ՔՄ ԵՎ 230.6ՔՄ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ԿԻՍԱՔԱՆԴ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂՎԱԾ 0.3092 ՀԱ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱԿՏՈՐԸ ԳՐԵՏԱ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի1992 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 1 որոշումը

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքում 239.0քմ և 230.6քմ մակերեսներով կիսաքանդ շինությունները և դրանցով զբաղված 0.3092 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողակտորը սեփականության իրավունքով տրամադել Գրետա Ասատրյանին:
2. Օրինականացման համար վճար չի նախատեսվում:
3. Համայնքում 239.0քմ և 230.6քմ մակերեսներով կիսաքանդ շինությունները և դրանցով զբաղված 0.3092 հա հողակտորին տրամադրել հասցե՝ Ե. Խաչատրյան փողոց, 11:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ց. Հակոբյան

2021թվական փետրվարի 12
Գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

«16 » փետրվարի 2021թ. N15

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի թիվ 2 որոշումը և Վարդան Շմավոնյանի դիմումը՝

Որոշում եմ՝

1. 04-087-0062-0004 ծածկագրի տակ գտնվող 0.101հա տնամերձ հողակտորին տրամադրել հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, Գեղակերտ համայնք Ա. Խաչատրյան փող. 21 :
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային տարածքային ստորաբաժանման Վաղարշապատ սպասարկման գրասենյակ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման

Համայնքի ղեկավար՝ Ց. Հակոբյան

2021 թվական փետրվարի 16

գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

«16» փետրվարի 2021թ. N 16

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի թիվ 2 որոշումը և Մխիթար Կոստանյանի դիմումը՝

Որոշում եմ՝

1. 04-087-0051-0007 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողակտորին և նրա վրա առկա շինությանը տրամադրել հասցե՝ Արմավիրի մարզ, Գեղակերտ համայնք Հ. Թումանյան փողոց, 35 :
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային տարածքային ստորաբաժանման Վաղարշապատ սպասարկման գրասենյակ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ց. Հակոբյան

2021թվական փետրվարի 16
Գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» փետրվարի 2021թ. N 17

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի թիվ 2 որոշումը և Հարություն Դանիելյանի դիմումը՝

Որոշում եմ՝

1. 04-087-0045-0008 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողակտորին և նրա վրա առկա բնակելի տանը տրամադրել հասցե՝ Արմավիրի մարզ, Գեղակերտ համայնք Մ Մաշտոցի փող տուն 55 :
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային տարածքային ստորաբաժանման Վաղարշապատ սպասարկման գրասենյակ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ց. Հակոբյան

2021թվական փետրվարի 19
Գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N 18

<<19>> փետրվարի 2021թ.

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԲՐԱՀԱՄԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի բնակիչ Հարություն Աբրահամի Դանիելյանը դիմել է Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի Մ. Մաշտոց փողոցի 55 հասցեում գտնվող տնամերձ 1137քմ օրինական հողամասի վրա, կառուցված101.4քմ բնակելի տան, 17.5քմ և 12.5քմ ավտոտնակների,15.2քմ մառանի, 6.4քմ թռչնանոցի, 7.0քմ ծածկի, 1.8քմ զուգարանի,22.1քմ անասնաշենքի, 72.1քմ ծածկի, 9.0քմ խոհանոցի, 27.8քմ թոնրատան և 6.6քմ պարիսպի գույքային իրավունքները վերականգնելու խնդրանքով:
Հաշվի առնելով, որ կառույցները իրականացվել են մինչև 15.05.2001թ, հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով և նույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35 հոդվածի առաջին մասի 24-րդ կետով,<< Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին >> ՀՀ օրենքով, հիմք ընդունելով Հարություն Դանիելյանի դիմումը

Որոշում եմ՝

1. Վերականգնել Գեղակերտ համայնքի Մ. Մաշտոց փողոցի 55 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Հարություն Դանիելյանի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 1137.0քմ օրինական հողամասի վրա գտնվող բնակելի տան՝ 101.4քմ, կառուցված 1955թ, բնակելի տուն101.4քմ՝ կառուցված 1955թ, ավտոտնակ՝ 17.5քմ կառուցված 1955թ., ավտոտնակ 12.5քմ կառուցված 2000թ, մառան 15.2քմ, կառուցված 2000թ., թռչնանոց 6.4քմ, կառուցված 2000թ, ծածկ 7.0քմ կառուցված 2000թ., զուգարան 1,8քմ, կառուցված 2000թ., անասնաշենք 22.1քմ, կառուցված 2000թ., ծածկ 72.1քմ , կառուցված 2000թ., խոհանոց 9.0քմ, կառուցված 1955թ., թոնրատուն 27.8քմ, կառուցված 1955թ.,պարիսպ 6.6քմ կառուցված 2000թ,.:
2. Շինությունների օրինականացման համար վճար չի սահմանվում:
3. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանման կողմից:
4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Հարություն Դանիելյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ց.Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N19Ա

<<26>> փետրվարի 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ 2012ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 31Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստաիի Հանարպետության օրենքի 37-րդ հոդվածով

Որոշում եմ

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի ղեկավարի 2012թվականի մայիսի 02-ի «Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման համայնքային հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 31Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ց. Հակոբյան

2021թվական փետրվարի 26
Գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N20Ա

<<26>> փետրվարի 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման կարգը հաստատելու մասին>>» N 1582-Ն որոշման 3-րդ կետը, արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման աշխատանքների կազմակերպման նպատակով

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքում ստեղծել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման համայնքային նոր հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հանձնաժողովի ստեղծման մասին որոշման մեկական օրինակներ տրամադրել մարզային հանձնաժողովին և մարզային փրկարարական վարչությանը /հավելվածներով/:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար

Ց. Հակոբյան

2021թվական փետրվարի 26

Գ. Գեղակերտ

Հավելված N1
ՀՀ Արմավիրի մարզի
Գեղակերտ համայնքի ղեկավարի
2021 թ. փետրվարի 26-ի N21Ա որոշման

Կազմ
արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման համայնքային հանձնաժողովի

Հանձնաժողովի նախագահ՝ Հակոբյան Ցոլակ / համայնքի ղեկավար/
Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ավետիսյան Հայկազ /համայնքի ղեկավարի տեղակալ/
Քարտուղար Հարությունյան Նատալյա/աշխատակազի քարտուղար/
Անդամներ՝ Հակոբյան Աննա /առողջապահության գծով մասնագետ/

Մակարյան Ռիմա /ֆինանսական գծով մասնագետ/
Վարդանյան Արայիկ /գյուղատնտեսության գծով մասնագետ/
Ստեփանյան Ստեփան /անասնաբուժական գծով մասնագետ/
Պետրոսյան Ավետիս /ոռոգման համակարգի մասնագետ/
Մարտիրոսյան Արտակ /գազամատակարարման ցանցի աշխատող/
/ջրամատակարարման ցանցի աշխատող/
Պողոսյան Հրաչիկ /էլեկտրամատակարարման ցանցի աշխատող/

Հավելված 2
ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտ
համայնքի ղեկավարի 2021թվականի
փետրվարի 26-ի թիվ 21Ա որոշման

ԿԱՐԳ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքների կազմակերպումը:

2. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման գործընթացը՝ կախված ընդգրկման տարածքից, հետևանքների բնույթից և նշանակությունից, համապատասխանաբար կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հայաստանի Հանրապետության մարզպետների ու համայնքների ղեկավարների որոշումներով ստեղծված և մշտական գործող հանձնաժողովների կողմից:

3. Գնահատման ու հաշվառման են ենթակա արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները:

4. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները հաշվառվում են դրանց առաջացման պատճառների ուսումնասիրման ու վերացման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցման համար միջոցներ ձեռնարկելու նպատակով:

5. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների ընդհանուր հաշվառումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը, Հայաստանի Հանրապետության մարզպետարանները և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ ըստ ուղղությունների՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան պետական կառավարման մարմինները:

6. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համար՝

1) կազմվում է վնասված գույքի ցանկը՝ նշելով դրանց տեսակը, գտնվելու վայրն ու համառոտ բնութագիրը.

2) ուսումնասիրվում և գնահատվում է վնասված գույքի վիճակը.

3) գնահատվում է գույքին պատճառված վնասի չափը:

7. Եթե արտակարգ իրավիճակների հետևանքով զոհվել են մարդիկ, կամ մարդկանց առողջությանը պատճառվել է վնաս, ապա Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Երևանի և մարզային փրկարարական վարչություններից դեպքի մասին տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով:

8. Տեղեկատվությունը ներառում է՝

1) դեպքի օրը, ամիսը, տարեթիվը, ժամը և վայրը.

2) տուժողների ազգանունները, անունները, հայրանունները, նրանց ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, բնակության և աշխատանքի վայրերը.

3) դեպքի վայր մեկնած՝ փրկարարական աշխատանքներ իրականացնող խմբի (անձանց) կազմը (անձնական տվյալները).

4) դեպքը բնութագրող այլ հանգամանքներ՝ իրավիճակը, եղանակային պայմանները և այլն:

9. Հանձնաժողովը գործում է հետևյալ ուղղություններով՝

1) գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատում.

2) բնակչության գույքին հասցված վնասների գնահատում.
3) ենթակառուցվածքներին հասցված վնասների գնահատում.
4) բժշկասանիտարական հնարավոր վնասների գնահատում:

11. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի կազմում՝ ըստ ուղղությունների ընդգրկվում են առողջապահության, գյուղատնտեսության, կապի և տրանսպորտի, քաղաքաշինության բնագավառների մասնագետներ և մասնագիտացված կառույցների ներկայացուցիչներ, ովքեր պետք է ուսումնասիրեն, հաշվառեն և գնահատեն ստեղծված իրավիճակն ու հավանական վտանգները:

12. Ելնելով հանձնաժողովների աստիճանակարգությունից՝ համայնքային հանձնաժողովի կողմից կազմված ակտերը քննարկվում են մարզային հանձնաժողովում, և համաձայնեցված ակտերը ներկայացվում են հանրապետական հանձնաժողով: Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների մասին վերջնական տեղեկատվությունն ամփոփում և հրապարակում է արտակարգ իրավիճակների հետևանքով պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողովը: